

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 2  
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի**

ք. Եղեգնաձոր

18.08.2017թ.

**Մարզխորհրդի նիստը նախագահում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը  
Քարտուղարում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
քարտուղարության**

**պետ Հ. Կարապետյանը**

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ մարզպետի տեղակալները, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, տարածքային գինկոմները, համայնքների ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, ֆերմերներ, նիստին հրավիրված ու մասնակցում են նաև՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ՉԼՄ ներկայացուցիչներ:

Մարզպետը մարզխորհրդի մասնակիցներին ներկայացրեց օրակարգը՝

**1.,** ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերն առավել արդյունավետ օգտագործելու և ինտենսիվ այգիներ հիմնելու ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, կապված 2017թվականի հուլիսի 28-ին ՀՀ վարչապետի Վայոց ձորի մարզ այցի խորհրդակցության արձանագրությամբ տրված հանձնարարականի կատարման հետ..:

/Չեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Ներսիսյան/

**2.,** Նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին..:

/ Չեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Ղազարյան/

**3.,** Չորահավաքային նախապատրաստական աշխատանքների մասին..:

/ Չեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ.Խուդավերդյան

**Օրակարգի առաջին հարցն „ ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերն առավել արդյունավետ օգտագործելու և ինտենսիվ այգիներ հիմնելու ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, կապված 2017թվականի հուլիսի 28-ին ՀՀ վարչապետի Վայոց ձորի մարզ այցի խորհրդակցության արձանագրությամբ տրված հանձնարարականի կատարման հետ.. զեկուցումամբ** հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Ներսիսյանը, վերջինս նշեց, որ մարզի վարչական տարածքը կազմում է - **230783հա**

- ընդամենը գյուղ. նշ. հողեր՝	-	<b>189457հա</b>
- ընդամենը ոռոգվող հողեր՝	-	<b>6523.3 հա</b>
- ընդամենը վարելահող՝	-	<b>15712հա</b>
որից ոռոգվող՝	-	<b>2763 հա</b>
- բազմամյա տնկարկներ	-	<b>1711 հա</b>
որից պտուղ՝	-	<b>867 հա</b>
խաղող՝	-	<b>844հա</b>
- խոտհարք	-	<b>5061 հա</b>
- որից ոռոգվող	-	<b>175հա</b>
- արոտ՝	-	<b>92310 հա</b>
- այլ հողատեսքեր՝	-	<b>74664 հա</b>
- տնամերձ հողեր՝	-	<b>3139 հա</b>

Ընթացիկ տարում մարզում կատարվել է 5178հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք: Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6523.3հա է , որից վարելահող՝ 2763հա, որը կազմում է ընդհանուր վարելահողերի 17.5 տոկոսը: Մինչ դեռ մարզի տարածքում տարեկան մթնոլորտային տեղումները չեն անցնում 400-450մմ: Այդ է հիմնական պատճառը, որ անջրտի վարելահողերի զգալի մասը՝ շուրջ 10 000հա դուրս է մնում ցանքաշրջանառությունից: Ոռոգելի

հողատրածքների ավելացման միակ հնարավորությունը փոքր ջրամբարների կառուցումն է /Ելփին, Խաչիկ, Վերնաշեն/

Մարզի տարածքում գործում են 7 հակակարկտային կայաններ, որն անբավարար է եղած ցանքատարածությունները կարկտից պաշտպանելու համար: Անհրաժեշտ է ևս 20 կայանների տեղադրում:

Կաթ մթերող և վերամշակող 5 ընկերությունները տարեկան մթերում են 1300տ կաթ:

Գործող հինգ չրանոցների և 15 սառնարանային տնտեսությունների արտադրական հզորությունները թույլ են տալիս իրականացնել մարզի հողօգտագործողների կողմից արտադրված պտուղ բանջարեղենի իրացումը:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն:

Մարզի 14 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,2 հա ընդհանուր տարացքով, որոնց միջոցով արտադրվելու է մոտ 100տ բանջարեղեն:

Գործում են 24 կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1140 մարդ է : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 1, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն – 7, բուսաբուծություն-2, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում - 4:

Գործում են 147 Ֆերմերային տնտեսություններ, որից անասնապահություն` 119, հողագործություն` 28:

Ինտենսիվ եղանակով մշակվում է 5.7հա պտղատու ,25 հա խաղողի այգիներ և 12հա հատապտուղ/ մորի, մոշ/:

<<Հայկական միրգ >> ծրագրի շրջանակներում հիմնել է 47 հա պտղատու այգի, ծրագրի շարունակականությունն ապահովելու համար չորս համայնքներում ստեղծվել են կոոպերատիվներ, որոնց միջոցով նախատեսվում է իրականացնել կաթիլային ոռոգում:

Օգոստոսի 20-ն շահագործման կհանձնվի Չառիթափի սպանդանոցը հերթափոխում կատարվելու է 650գ մանր և 25գ խոշոր եղջրավոր անասունի մորթ:

Մարզի գյուղատնտեսության հետագա զարգացումը տեսնում ենք հողերի խոշորացումով, ֆերմերային տնտեսությունների զարգացմամբ, կորագույն տեխնոլոգիաների ներդրման մեջ` մասնավորապես անցում կատարել ինտենսիվ այգիների հիմնման, որտեղ ոռոգումը կկատարվի կաթիլային եղանակով:

2010-2017թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 54 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով: մարզում առկա է 21 հացահատիկահավաք կոմբայն, որոնցից սարքին են 17-ը: Իրատեսական հաշվարկների արդյունքում մեզ անհրաժեշտ է ևս 3 հացահատիկահավաք կոմբայն:

2017 թվականի 1-ին կիսամյակում ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 552 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 577 555 000 դրամ, 35 գյուղացիական տնտեսությունների 980900 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր` 14-20 % տոկոսադրույքով, երեք տարի մարման ժամկետով և 393 գյուղացիական տնտեսությունների 375 000 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով: Կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

Այսպիսով այսօրվա դրությամբ մարզի վարելահողերը օգտագործվում են 35 տոկոսով, խոտհարքները` 80 տոկոսով և արոտավայրերը` 30 տոկոսով: Մեր բոլորիս գերակա խնդիրն է ավելացնել մշակովի հողատարածությունները, բարձրացնելով գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետությունը:

Այդ նպատակով ՀՀ կառավարության կողմից սահմանվել են գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման կարգը:

**Ձեկուցման վերաբերյալ գյուղփոխբանկի կողմից տնտեսություններին տրամադրված վարկերի քանակի մասին նախագահողը** հարց ուղղեց համայնքների ղեկավարներին, արդյոք վրջիններս տեղյակ են դրանից, ստացվեց բացասական պատասխան:

**Ճավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին** Չառիթափի և Խաչիկի համայնքների ղեկավարները, գործարար` Վ. Մաթեվոսյանը, Արեւու գինու գործարանի տնօրեն` Ռ. Սիմոնյանը վերջիններս անդրադարձան տեղերում իրականացվող աշխատանքներին , առկա դժվարություններին, ոռոգման և պարարտացման հարցերին, անդրադարձան փոքր ջրամբարների կառուցման, ինտենսիվ այգիների հիմնման,բարձր բերքատու տնկանյութի ձեռքբերման խնդիրներին:

**Ամփոփիչ խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ` Ա.Հարությունյանը**, վերջինս շնորհակալություն հայտնեց հրավերի համար, ապա օգտվելով առիթից երախտիքի ու շնորհակալության խոսքեր ուղղեց վերջին օրերին Արտավանում բռնկված լայնածավալ հրդեհի մարման աշխատանքներին ակտիվորեն մասնակցած

համայնքների ղեկավարներին, “Լիդիան Արմենիա”ՓԲԸ-ի ղեկավարությանն ու բոլոր մասնակիցներին: Այնուհետև փոխնախարարը հույս հայտնեց, որ այն նպատակասլացությունն ու սրտացավությունը ինչի ականատեսը եղանք բոլորիս կօզնի հաջողությունների հասնել գյուղատնտեսության բնագավառում: Բանախոսը առանձնացրեց մի շարք խնդիրներ: Առաջինը, հաշվի առնելով անասնահամաճարակի բռնկման վտանգը, խիստ ուշադրություն դարձնել պատվաստումներին և իրականացվող մյուս միջոցառումներին:

Երկրորդը, չվտանգել պետական ծրագրերի իրականացումը, թույլ չտալ սերմացուի, դիզելային վառելիքային և օրգանական պարարտանյութերի պարտքերի առաջացում, եղածները արագ մարել: Մտահոգիչ է այն, որ ներկայումս հանրապետությունում առկա է 1.8 միլիարդի նման պարտքեր:

Երրորդը, հանրապետությունում մեկնարկել է անձրևացման եղանակով, հակակարկտային ցանցերի տեղադրմամբ բարձր բերքատու ինտենսիվ պտղատու այգիների հիմնում, ինչի համար գյուղացիական տնտեսություններին տրամադրվում է սուբսիդավորվող ցածր տոկոսով վարկեր՝ հինգ տարի մարման ծամկետով: Փոխնախարարը տեղեկացրեց, որ նման կարգի մեկ հեկտար այգի հիմնելու համար պահանջվում է 26 մլն դրամ, ինչից վախենալ պետք չէ, քանի որ հիմնված այգին երկրորդ տարվանից կանգնում է բերքի, իսկ նման այգու շահութաբերությունը շատ բարձր է, այն տարեկան կազմում է շուրջ 25 մլն դրամ: Վերջում ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալը պատասխանեց բոլոր բարձրացրած հարցերին:

**Օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Ղազարյանին, վերջինս ներկայացրեց *տեղեկանք հանրակրթական համակարգի մասին***

**18.08.2017թ.**

	Դպրոցներ ընդամենը	Միջնակարգ դպրոցներ	Հիմնական դպրոցներ	Ավագ դպրոցներ	Վարժարաններ
	<b>50</b>	<b>31</b>	<b>14</b>	<b>3</b>	<b>2</b>
Աշակերտների թիվը	<b>6278</b>	<b>3652</b>	<b>1837</b>	<b>677</b>	<b>112</b>
Ուսուցիչների թիվը	<b>1062</b>	<b>657</b>	<b>279</b>	<b>93</b>	<b>33</b>
Ուսումնա-օժանդակ անձնակազմ	<b>510</b>	<b>315</b>	<b>134</b>	<b>42</b>	<b>19</b>
Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցներ	<b>17</b>	<b>6</b>	<b>11</b>	<b>0</b>	<b>0</b>
50-100 աշակերտ ունեցող դպրոցներ	<b>12</b>	<b>10</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>2</b>
100-ից ավելի աշակերտ ունեցող դպրոցներ	<b>21</b>	<b>14</b>	<b>4</b>	<b>3</b>	<b>0</b>
Նախակրթարաններ ունեցող դպրոցներ	<b>14</b> , որտեղ ընդգրկված է <b>172</b> երեխա				
Ներառական կրթություն իրականացնող դպրոցներ	<b>7</b> , որտեղ ընդգրկված է <b>107</b> երեխա				

**Ուսուցիչ/աշակերտ հարաբերակցությունը` – 1:6**

**Դասարանի միջին խտությունը` - 12**

**Մարզային ենթակայությամբ գործող 47 հանրակրթական դպրոցների աշակերտների կրթության կազմակերպման համար նախատեսված է 1 715 764,9 հազ. դրամ:**

**Պետբյուջեից ներառական կրթության կազմակերպման համար նախատեսվել է 74832,3 հազ. դրամ:**

**Պետբյուջեից նախակրթարաններում կրթության կազմակերպման համար նախատեսվել է 24807,9 հազ. դրամ:**

**• Հանրակրթական դպրոցների ռացիոնալացման մասին**

Վայքի վարժարանի և Եղեգնաձորի վարժարանի միավորման ձևով վերակազմակերպում համապատասխանաբար Վայքի և Եղեգնաձորի ավագ դպրոցների հետ: Արդյունքում Վայքի վարժարանի շենքը կհատկացվի գերբեռնված Վայքի հիմնական դպրոցին: Իսկ Եղեգնաձորի վարժարանի շենքը կարող է օգտագործվել այլ ուսումնական նպատակներով:

**Վերակազմակերպման ձևով միավորման դեպքում կոնսոլիդացիոն տարեկան մոտ 80 մլն. դրամ**

- Վայոց ձորի մարզի սահմանամերձ Խնձորուտ Բարձրունի և Սերս գյուղերի դպրոցներում կան ուսուցչի թափուր տեղեր (օտար լեզուներ, ռուսաց լեզու, ֆիզկուլտուրա)
- Մարզում գործում է 17 համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ընդգրկված են 1044 երեխաներ: Սակայն մի շարք համայնքներում չկան նախադպրոցական հիմնարկներ, որի հետևանքով չի ապահովվում նախադպրոցական կրթության մատչելիությունը:
- Մարզի 5 դպրոցներում տեղադրված են սմարթ դասարաններ և այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ մնացած դպրոցներում ևս ստեղծելու:

**Կատարված աշխատանքներ**

1. Մարզի դպրոցների մեծ մասը հիմնանորոգված են (40-ը):
2. Հիմնավորապես լուծված է ջեռուցման խնդիրը: 19 դպրոցներ ջեռուցվում են գազի լուրջ կաթսայատան միջոցով, մնացածները էլեկտրական ջեռուցիչներով:
3. Դպրոցներում աշխատող 1062 ուսուցիչներից 923-ը (87%-ը) ունեն բարձրագույն մանկավարժական և բարձրագույն կրթություն:
4. Շուրջ 50 ուսուցիչներ ստացել են որակավորման 1-ին աստիճանի տարակարգ:
5. Օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր ուսուցիչ մասնագիտական վերապատրաստման դասընթացներ է անցնում 5 տարին 1 անգամ:
6. Բոլոր դպրոցներում հաջողությամբ իրականացվում է „Կայուն դպրոցական սնունդ,, ծրագիրը: 1-4 դասարանների 2348 երեխաներ ստանում են սնունդ:
7. Բոլոր դպրոցներն ապահովված են համակարգիչներով, դրանց թիվը 891-է: աշակերտ/համակարգիչ հարաբերակցությունը հետևյալն է՝ 7 աշակերտին 1 համակարգիչ: Գործում է ինտերնետ կապը:
8. 1-ին և 2-րդ դասարանների 1189 աշակերտներ ստացել են ուսումնական գրասալիկներ (պլանշետներ), որոնք օգտագործվում են դասի ժամանակ: Ծրագիրը շարունակական է:
9. Անցած ուստարում միջնակարգն ավարտել են 479 շրջանավարտներ, որոնցից 225-ը մասնակցել են միասնական քննություններին, որոնց մոտ 70%-ը ընդունվել են հանրապետության տարբեր պետական բուհ-եր:
10. Անցնող ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլին 16 առարկաներից մասնակցել են շուրջ 600 դպրոցականներ: Նրանցից 52-ը իրավունք են նվաճել մասնակցելու հանրապետական փուլին, որոնցից 11-ը վերադարձել են դիպլոմներով և գովասանագրերով:
11. Մինչև անցած տարի քաղաքային 5 դպրոցներում, իսկ սեպտեմբերի 1-ից բոլոր դպրոցներում կղասավանդվի „Ազգային երգ ու պար,, առարկան, որի համար վերապատրաստվել են 45 ուսուցիչներ:
12. Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռոբոտաշինության լաբորատորիաներ:
13. Բոլոր միջնակարգ դպրոցներն ապահովված են ռազմագիտության կաբինետներով և ուսումնական զենքով: Այս տարի այն կթարմացվի:
14. Նոր ուստարվա համար պատվիրվել է 19632 կտոր դասագիրք, 16300 կտոր ստացվել է, մնում ստանալ 3332 կտոր:
15. Պատվիրվել են նոր ուստարվա դասամատյանները, որոնք մարզ կբերվի առաջիկա 2-3 օրում:

**Հիմնախնդիրներ**

1. „Կայուն դպրոցական սնունդ,, ծրագիրն իրականացնելիս դժվարություններ են առաջանում ճաշարանների, տաք ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծման համար դպրոցների ֆինանսական միջոցների բացակայությունը:

2. Ուսումնական գրասալիկների (պլանշետների) օգտագործման, ինտերնետ կապի անխափան ապահովելու համար համապատասխան մասնագետի բացակայությունը:
3. Նոր ներդրված „Շախմատ„ և „Ազգային երգ ու պար„ առարկաների դասավանդման վերահսկողության բացակայություն (դրանց համար մշակված չեն առարկայական չափորոշիչներ):
4. Հանրակրթության ոլորտում կրթության որակի վերահսկողության բացակայությունը նդհանրապես:
5. Դպրոցների կառավարման խորհուրդների ոչ արդյունավետ գործունեություն (պատճառը խորհրդի անդամների համար պատասխանատվություն չսահմանելն է):

**Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը**, ով նշեց, որ մարզի հանրակրթության ոլորտը միշտ էլ գտնվել է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում մեր մարզում առաջիններից մեկը ներդրվեց “Դպրոցական սնունդ”, “Մեկ աշակերտ, մեկ համակարգիչ” ծրագրերը այս ամենը նպաստեց, կրթության որակի բարձրացմանը: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ առանձին ուսումնական հաստատություններ գործում են թերբեռնված, իսկ հատկապես քաղաքային հաստատությունները գերբեռնված՝ երկիերթ գրաֆիկով: Մինչև 2017-2018 ուս տարվա մեկնարկը հաշված օրեր են մնացել, իսկ անելիքները շատ են անհրաժեշտ է լուծել դպրոցական դասագրքերի, մյուս պարագաների, ուսումնական ծրագրերի, դասմատյանների ու գույքային մյուս հարցերը: Վերջում նախագահողը մարզխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ առայժմ կասեցվել է Եղեգնաձորի և Վայքի քաղաքային վարժարանների լուծարման գործընթացը, չնայած դրան հանրակրթության ոլորտում օպտիմալացումը անխուսափելի է:

**„Չորահավաքային նախապատրաստական աշխատանքների մասին.. զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի զորահավաքային նախապատրաստական բաժնի պետ Վ. Խուղավերոյանը**, ով նշեց, որ համապատասխան նախապատրաստական աշխատանքներ իրականացվում են վաղորօք հաստատված առաջադրանքներով ու նորմատիվ փաստաթղթերով:

Չեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Վայքի զինկոմ, մայր Զ. Մելքոնյանը և Եղեգնաձորի զինկոմ, փոխգնդապետ Կ. Բաբայանը:

**Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը**, ով կարևորեց հարցի քննարկումը, առաջարկեց համայնքների ղեկավարներին ու զինկոմներին, համագործակցելով մարզպետարանի զորահավաքային բաժնի հետ ակտիվացնել ու անթերի կատարել զորահավաքային նախապատրաստական աշխատանքները:

“